ԹԻՎ 30 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

21 հունվարի 2022թ.
ք. Գյումրի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 1 -Ա

ՄԵՐԳԵԼ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆԻ, ԱՐՄԵՆԱԿ ԱՐԱՄՅԱՆԻ, ՍՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՅԱՆԻ, ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՓԱՍՏԱԲԱՆ ՄՀԵՐ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 27.12.2021թ. վերահասցեագրման կարգով թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ուղարկված դիմողներ Մերգել Մուրադի Ղարիբյանի և մյուսների ներկայացուցիչ, փաստաբան Միեր Շահնազարյանի 23.12.2021թ. դիմումը՝ թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

Դիմողներ՝ Մերգել Մուրադի Ղարիբյանի, Հայկ Բագրատի Նիկոլյանի, Արմենակ Արամի Արամյանի, Սուզաննա Եղիշի Մանոյանի, Գրիգոր Հովհաննեսի Պետրոսյանի և Անահիտ Զիլիմխանի Մելքոնյանի ներկայացուցիչ, փաստաբան Միեր Շահնազարյանը 2021 թվականի դեկտեմբերի 23-ին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղարկել է դիմում, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 27-ի 01-1231 գրությամբ վերահասցեագրել է թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովին: Ներկայացված դիմումում նշված է.

«**1. Դիմումի փաստերն ու հիմքերը**

▪ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքը բաղկացած է հետևյալ բնակավայրերից. Ամասիա, Արեգնադեմ, Գտաշեն, Կամխուտ, Ողջի, Բյուրակն, Մեղրաշատ, Հովտուն, Բանդիվան, Ջրաձոր, Շաղիկ, Գառնառիճ, Ծաղկուտ, Զորակերտ, Բերդաշեն, Աղվորիկ, Արդենիս, Ալվար, Զարիշատ:

▪ Համայնքի վերջին խոշորացումը պայմանավորված է եղել 2016թ-ին խոշորացված Ամասիա և Արփի խոշորացված համայնքների խոշորացմամբ:

▪ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող 5476 անձ է, որից ընտրությանը մասնակցել է 3195 ընտրող, որը կազմում է ընդհանուր ընտրողների 58.35 տոկոսը:

▪ Ընտրությանը մասնակցել են երեք դաշինքներ ՔՊ կուսակցության, Հանրապետական կուսակցության և Արփի-Ամասիա կուսակցությունների դաշինքը:

▪ 05.12.2021 թ-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքում տեղի ունեցան համայնքի ավագանու անդամների ընտրություններ:

▪ Մերգել Ղարիբյանը և մյուսները ընտրություններին մասնակցել են Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության Ընտրական ցուցակով:

▪ Ընտրական ցուցակը ղեկավարել է Մերգել Ղարիբյանը: Ցուցակում ընդգրկված են եղել 32 ավագանու անդամության թեկնածուներ:

▪ 05.12.2021թ-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում Մերգել Ղարիբյանի կողմից ՔՊ կուսակցության օգտին քվեարկել են 1217 ընտրող, որն էլ իր հերթին կազմում է ընդհանուր ընտրողների 38.84 տոկոսը:

▪ ՔՊ կուսակցության ընտրական ցուցակով մանդատ ստացած ավագանու 6 անդամները չեն միացել Հանրապետական կուսակցությանը և Արփի-Ամասիա կուսակցությունների դաշինքին ներկայացնող ավագանու անդամներին:

▪ 13.12.2021թ-ին ՔՊ կուսակցության Ընտրական ցուցակի 32 ավագանու անդամության թեկնածուները նոտարական կարգով վավերացված դիմումներով հրաժարվել են իրենց մանդատներից:

▪ Թիվ 30 ընտրատարածքային Հանձնաժողովի կողմից 16.12.2021թ-ին կայացվել է թիվ 27-Ա որոշումը ՔՊ ընտրական ցուցակով ավագանու անդամների թեկնածուներիգրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2. Իրավական հիմնավորումներ.

Գտնում եմ, որ սույն դիմումը հիմնավոր է, բխում է համապատասխան իրավական ակտերից և ենթակա է բավարարման հիմքում ունենալով ներքոհիշյալ պատճառաբանություններն ու հետևությունները:

Ազատ ընտրությունների իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Այն քաղաքական իշխանության չարաշահման դեմ ուղղված ժողովրդավարական բոլոր երաշխիքներից ամենահիմնարարն է: Իրական և իրավական ընտրությունները պայմանավորում են ընտրության հենքով կազմավորվող մարմիններին արդյունավետ գործունեությանը: Տեղական ինքնակառավարման ոլորտում համամասնական կարգով, ուղղակի ընտրական իրավունքի իրացմամբ է ձևավորվում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը՝ ավագանին:

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի (կուսակցության) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

Համաձայն Ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի՝ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են պարբերաբար՝ Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում: Նույն օրենքի 129-րդ հոդվածի համաձայն՝ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների

դաշինքները: Թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ կուսակցության ընտրական ցուցակով:

Նույն օրենքի 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցությունը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև 18.00-ն, իրավունք ունի ներկայացնելու ինքնաբացարկի մասին դիմում:

Իսկ նույն իրավական ակտի 141-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կողմից ներկայացված ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դիմումները վավերացվում են նոտարական կարգով, կամ համապատասխան դիմումը անձը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված ՝ ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն ընտրական հանձնաժողով է ներկայացվում վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում:

Ինչպես նկատում ենք, ընտրված ավագանու անդամի լիազորությունները, նրա ավագանու կարգավիճակը դադարում են՝

- Ինքնաբացարկի վերաբերյալ գրավոր կամքի արտահայտմամբ և
- Մանդատից հրաժարվելու մասին միաժամանակյա դիմում ներկայացնելու ձևով:

Սույն դիմումին կից ներկայացվող փաստաթղթերից նկատում ենք, որ նշված ակնհայտ իրավական պահանջները բավարարված են ամբողջությամբ:

Ինչպիսի հետևանքներ կառաջացնի Ամասիա խոշորացված համայնքի ՔՊ կուսակցության ընտրացուցակով ընտրված ավագանու անդամների մանդատից հրաժարվելն այն դեպքում ավագանու անդամների քանակը սահմանված է 15ավագանու անդամ և ինչպիսի հետևանքներ կառաջացնի թիվ 30 Տարածքային ընտրական հանձնաժողովի 27-Ա որոշումը ՔՊ ավագանու ընտրական ցուցակի ողջ անդամների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը: Տվյալ դեպքում ավագանու անդամների թվաքանակը սահմանված և ցուցված է օրենքով. Այսպես. Համաձայն ՀՀ ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 104.1-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Համայնքի ավագանին բաղկացած է՝ 1) հինգ անդամից՝ մինչև 1000 ընտրող ունեցող համայնքում . . . 4) տասնհինգ անդամից՝ 4001-ից 10000 ընտրող ունեցող համայնքում:

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 135.1 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով չի ձևավորվել համայնքի ավագանու 2/3-ը: Տվյալ դեպքում ավագանու 6 անդամի բացակայությունը հանգեցնելու է ավագանու 9 անդամի առավելագույն քանակի առկայությունը, որը պակաս է օրենքով սահմանված 2/3-ից: Այսինքն գործ ունենք օրենքի ուժով չձևավորված մարմնի՝ ավագանու հետ, նաև չկայացած ընտրության հետ:

Համաձայն Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի 3-րդ հոդվածի՝ 1. Տեղական ինքնակառավարում հասկացություն նշանակում է՝ տեղական

ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով: Այդ իրավունքը իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամները ընտրված են ազատ, փակ գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները կարող են ունենալ հաշվետու գործադիր մարմիններ: Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովին, հանրաքվեին կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության այլ ձևի դիմելը այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով:

Եվրոպական խարտիայի այս իրավանորմը համադրելով ՀՀ Սահմանադրության 2-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածների հետ, ստացվում է, որ գործ ունենք ՀՀ Սահմանադրության հիմքով չձևավորված տեղական ինքնակառավարման մարմնի հետ, որի հիմքում ընկած է չկայացած ընտրությունը:

ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: … Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: … Համայնքի ավագանինիր լիազորություններն ստանձնում է ոչ շուտ, քան նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման հաջորդ օրը: համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորությունները:

Ակնհայտ և անհերքելի է, որ ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի 6-րդ հոդվածի տեսանկյունից գործ ունենք՝

- Չկայացած ընտրության հետ, որի արդյունքում գործ ունենք՝
- Սահմանադրորեն չձևավորված ավագանու հետ,
- Չընտրված, իսկ եթե ընտրվել է, ապա ՀՀ Սահմանադրության և այլ իրավական ակտերի պահանջների կոպիտ խախտմամբ ընտրված համայնքի ղեկավարի հետ:
- Նոր ընտրություն անցկացնելու իրավական անհրաժեշտության հետ:

Հաջորդը. անհրաժեշտ է ի նկատի ունենալ, թիվ 30 ընտրատարածքային Հանձնաժողովի 16.12.2021թ-ի թիվ 27-Ա որոշումը վերաբերվում է ՔՊ կուսակցության ընտրական ցուցակի ողջ թեկնածուներին: Նման պարագայում կստացվի որ նախ 5476 ընտրողից հաշվառման է ենթակա 1978 քվեները, այսինքն ընտրության իրավունք ունեցող անձանց 31 տոկոսը:

Դատելով ՀՀ Ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 135/1-րդ հոդվածի էությունից ակնհայտ է, որ օրենքի տառացի մեկնաբանության պայմաններում գործ ունենք չկայացած ընտրության հետ և նոր ընտրություններ անցկացնելու իրավաբանորեն պարտադրված անհրաժեշտության հետ: Նշվածը բխում

է նաև ՀՀ Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 41-րդ հոդվածից, համաձայն որի նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահամանված չլինելու դեպքում՝տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

3. Պահանջ.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 119, 121, 135.1-րդ հոդվածներով, ՀՀ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 30, 31 և 53-րդ հոդվածներով խնդրում եմ.

- Ընդունել որոշում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի ավագանու անդամների 05.12.2021թ-ի ընտրությունները չկայացած համարելու մասին.
- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 20.12.2021թ-ի ընտրությունը ճանաչել ապօրինի և վերացնել համայնքի ղեկավարի ընտրության մասին արձանագրությունը և/կամ որոշումը:»:

Դիմումին կից ներկայացվել են դիմումատուներ Մերգել Մուրադի Ղարիբյանի, Հայկ Բագրատի Նիկոլյանի, Արմենակ Արամի Արամյանի, Սուզաննա Եղիշի Մանոյանի, Գրիգոր Հովհաննեսի Պետրոսյանի և Անահիտ Զիլիմխանի Մելքոնյանի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, վերջիններիս կողմից տրված լիազորագրի պատճենը և դիմումատուների ներկայացուցիչ, փաստաբան Միեր Շահնազարյանի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

2. Թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 135.1. հոդվածի 1-ին մասի համաձայն. «Համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի առաջադրվել, կամ

2) որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) սույն օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով չի գրանցվել (գրանցումը մերժվել է).

3) առաջադրված բոլոր կուսակցությունները գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից հետո ներկայացրել են ինքնաբացարկի մասին դիմում.

4) կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է սույն օրենսգրքով սահմանված՝ համայնքի ավագանու անդամների թվից, և թեկնածուների ցանկը սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում չի համալրվել.

5) սույն օրենսգրքով սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով չի ձևավորվել համայնքի ավագանու 2/3-ը:»:

Ներկայացված դիմումում վկայակոչվել է Ընտրական օրենսգրքի 135.1. հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որում, որպես համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունը չկայացած համարելու հիմք, սահմանված է. «սույն օրենսգրքով սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով չի ձևավորվել համայնքի ավագանու 2/3-ը»: Բացի այդ, դիմումատուները, հիմք ընդունելով նշված դրույթը, դիմումում նշել են. «Տվյալ դեպքում ավագանու 6 անդամի բացակայությունը հանգեցնելու է ավագանու 9 անդամի առավելագույն քանակի առկայությանը, որը պակաս է օրենքով սահմանված 2/3-ից: Այսինքն գործ ունենք օրենքի ուժով չձևավորված մարմնի՝ ավագանու հետ, նաև չկայացած ընտրության հետ:»:

Վկայակոչված դրույթի վերլուծությունը թույլ է տալիս կատարել եզրահանգում, որ վերոնշյալ կարգավորումը վերաբերում է այն դեպքին, երբ Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով չի ձևավորվել համայնքի ավագանու 2/3-ը:

Այսպես, Ընտրական օրենսգրքի 104.1. հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Համայնքի ավագանին բաղկացած է՝

1) հինգ անդամից՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում.

2) յոթ անդամից՝ 1 001-ից 2 000 ընտրող ունեցող համայնքում.

3) ինն անդամից՝ 2 001-ից 4 000 ընտրող ունեցող համայնքում.

4) տասնհինգ անդամից՝ 4001-ից 10 000 ընտրող ունեցող համայնքում.

5) քսանմեկ անդամից՝ 10 001-ից 25 000 ընտրող ունեցող համայնքում.

6) քսանյոթ անդամից՝ 25 001-ից 70 000 ընտրող ունեցող համայնքում.

7) երեսուներեք անդամից՝ 70001-ից մինչև 300 000 ընտրող ունեցող համայնքում.

8) վաթսունհինգ անդամից՝ 300 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում:»:

Նույն հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի կողմից՝ ըստ համայնքների և ընտրական տեղամասերի, տրամադրված տեղեկանքում նշված ընտրողների թիվը:»: Նշված տեղեկանքում Շիրակի մարզի Ամասիա համայնքի ընտրողների թիվն է՝ 5696: Ըստ ընտրողների թվի՝ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին պետք է բաղկացած լինի 15 անդամից՝ հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 104.1. հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի կարգավորումը:

Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով ընտրություններն անցկացվել են 2021 թվականի դեկտեմբերի 5-ին:

Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տարածքային ընտրական հանձնաժողովը սույն օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, ամփոփում է համայնքների (բացառությամբ Երևանի) ավագանիների ընտրությունների արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը՝

1) համապատասխան համայնքների ավագանիներ ընտրվելու մասին.

2) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.

3) համապատասխան համայնքների ավագանիների ընտրություններն անվավեր ճանաչելու և ավագանու ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին.

4) համապատասխան համայնքների ավագանիների ընտրություններն անվավեր ճանաչելու և նոր ընտրություն նշանակելու մասին.

5) համապատասխան համայնքների ավագանիների ընտրությունները չկայացած ճանաչելու և նոր ընտրություններ նշանակելու մասին:»:

Թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված և 141-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումները, ամփոփել է Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքները և 2021 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունել է թիվ 23-Ա որոշումը, որի հիման վրա ընդունել է նաև Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված որոշումը, այն է՝ 2021 թվականի դեկտեմբերի 12-ի «Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքներով Ամասիա համայնքի ավագանի ընտրվելու մասին» թիվ 25-Ա որոշումը: Նշված որոշմամբ ամրագրվել է, որ Ամասիա համայնքի ավագանին ընտրվել է և մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

«1) «Ամասիա-Արփի» կուսակցությունների դաշինք 6 մանդատ.

2) Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 3 մանդատ.

3) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 6 մանդատ:»:

Վերը նշված որոշման համաձայն՝ ավագանու անդամների բոլոր թվով 15 մանդատները բաշխվել են:

Թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 25-Ա որոշումը դատական կարգով չի բողոքարկվել:

Ներկայացված դիմումով պահանջվում է «ընդունել որոշում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի ավագանու անդամների 05.12.2021թ-ի ընտրությունները չկայացած համարելու մասին» այն դեպքում, երբ քվեարկություն անցկացնելու պարագայում նման որոշում կարող էր ընդունվել բացառապես Ընտրական օրենսգրքի միայն 74-րդ հոդվածի 6-րդ մասով և 141-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ընդ որում, նշված ժամկետում կարող է ընդունվել Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 5-րդ կետերում նշված թվով 5 որոշումներից որևէ մեկը, ինչը նշանակում է, որ մեկ որոշում ընդունելու դեպքում մնացած 4 որոշումների ընդունումը բացառվում է:

Դիմումատուները չեն վիճարկում թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 25-Ա որոշման իրավաչափությունը, ինչը կարող էին անել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը, և միաժամանակ պահանջում են նույն ընտրությունների արդյունքներով կայացնել մեկ այլ որոշում՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու ընտրությունները չկայացած ճանաչելու մասին, ինչն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումը՝ «ընդունել որոշում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի ավագանու անդամների 05.12.2021թ-ի ընտրությունները չկայացած համարելու մասին» պահանջի մասով երթակա է մերժման:

Դիմումում ներկայցված երկրորդ պահանջը վերաբերում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 20.12.2021թ-ի ընտրությունը ապօրինի ճանաչելուն և համայնքի ղեկավարի ընտրության մասին արձանագրությունը և/կամ որոշումը վերացնելուն, որի քննությունը առարկայական ենթակայության տեսանկյունից դուրս է թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի իրավասության շրջանակներից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումը՝ «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 20.12.2021թ-ի ընտրությունը ճանաչել ապօրինի և վերացնել համայնքի ղեկավարի ընտրության մասին արձանագրությունը և/կամ որոշումը» պահանջի մասով ևս ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Դիմումատուներ Մերգել Մուրադի Ղարիբյանի, Հայկ Բագրատի Նիկոլյանի, Արմենակ Արամի Արամյանի, Սուզաննա Եղիշի Մանոյանի, Գրիգոր Հովհաննեսի Պետրոսյանի և Անահիտ Զիլիմխանի Մելքոնյանի ներկայացուցիչ, փաստաբան Միեր Շահնազարյանի 23.12.2021թ. դիմումը մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Որոշումը կարող է բողոքարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան օրացուցային 3 օրվա ընթացքում:

Թիվ 30 տարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝ ***Ա. Խաչատրյան***